



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ
ՀԱՆՐԱԴԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲԻԶՆԵՍԻ ՀԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ



Փետրվար 2022



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒԼՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲԻՉՆԵՍԻ ՀԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Մշակվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ:

Փետրվար 2022

Այս հրապարակումը կատարվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ արտահայտված կարծիքների պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում արտահայտված որևէ կյոթի, տեղեկության կամ կարծիքի անսխալության, ճշգրտության կամ հավաստիության համար: Հրապարակումը տպագրվել է ՀԳՀՄ-ի կողմից: Սույն հրապարակումը չի արտացոլում ԱՄԿ-ի տեսակետները կամ քաղաքականությունը:

Ներածություն

Հայաստանի տնտեսական ցուցանիշների համար, ամենայն հավանականությամբ, խոչընդոտ է հանդիսանում գործող չափազանց ծանր և վատ բաշխված հարկային բեռը: 2019թ-ին երկրի հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը հասել է մինչև 22.2%, ինչը 2015թ.-ից ի վեր գազաթնակետային մակարդակում է՝ լինելով ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանի ամենածանր բեռը, և շատ ավելի բարձր է, քան գործընկերներ երկրներում արձանագրված 17.3% միջին հարաբերակցությունը: Տարածաշրջանում ընդհանուր առմամբ պահպանվող կամ նվազող հարկային բեռի համատեքստում Հայաստանի հարկային բեռն անել է՝ լրացուցիչ ճնշում գործադրելով հայ հարկատուների վրա: Ավելին, 2015-2019թթ. ժամանակահատվածում ընդհանուր հարկային եկամուտներում եկամտահարկի և շահութահարկի տեսակարար կշիռը բարձր է եղել՝ միջինում կազմելով ընդհանուր հարկային եկամուտների 41.2% -ը, ինչը կրկին ամենաբարձրն է տարածաշրջանում:

Հարկային նեղ բազան բացասաբար է անդրադառնում Հայաստանի հարկային քաղաքականության վրա: Այս քննադատությունը նոր չէ, քանի որ բազմիցս ընդգծվել է Հայաստանի հարկմանն ուղղված նախկին գնահատումներում: Այնուամենայնիվ, տարիների ընթացքում փոքր-ինչ առաջընթաց է գրանցվել, ինչը նշանակում է, որ գոյություն ունեն չափից դուրս թվով հարկերից ազատումներ և լրացուցիչ բեռ հարկ վճարողների համար: 2019թ.-ին հարկային ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 6,7%-ը և հարկային եկամուտների 30,3%-ը, ինչը զգալիորեն գերազանցում է համաշխարհային միջին ցուցանիշը՝ համապատասխանաբար 3,6% և 23,2%՝ հանգեցնելով տնտեսական գործակալների միջև անբարեխիղճ մրցակցության և միաժամանակ երկրում խթանելով թույլ հարկային մշակույթը: Հարկերից ազատման չափից ավելի օգտագործումն ոչ միայն հանգեցնում է ավելի բարդ հարկային վարչարարության, այլ նաև խոչընդոտում է ավելի արդյունավետ հարկային քաղաքականությանը՝ արգելք դառնալով այնպիսի տարբերակների, ինչպիսին է ցածր դրույքաչափերի լայնամասշտաբ քաղաքականությունը:

Հայաստանում ձեռնարկությունների և աշխատողների կողմից վճարվող հիմնական հարկերի դրույքաչափերը հիմնականում համահունչ են ԵՄ Գործընկերության տարածաշրջանում առկա դրույքաչափերին: Կորպորատիվ եկամտահարկը (կամ շահութահարկը) գործում է 18% հաստատագրված դրույքաչափով, որը համարժեք է տարածաշրջանում կիրառվող հիմնական միջին դրույքաչափին: Նույնը վերաբերում է նաև ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ), որը Հայաստանում 20% է: Ինչ վերաբերում է անձնական եկամտահարկին, ապա հարկն այժմ գործում է նաև հաստատագրված դրույքաչափով, թեև 22% ընդհանուր դրույքաչափը գերազանցում է 2021թ.ին տարածաշրջանային գործընկերների շրջանում դիտարկված 18% միջին դրույքաչափը: 2023թ.-ին նախատեսվում է նվազեցնել անձնական եկամտահարկը մինչև 20 %: Միևուր, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) արտոնյալ հարկումը, ինչպես նաև ակցիզային հարկերը մեծ նշանակություն են ձեռք բերել և 2015թ.-ից ի վեր գրանցել ամենաբարձր աճը:

Այնուամենայնիվ, չնայած վերջին տարիներին արձանագրված հարաբերական անկմանը, ԱԱՀ-ն ընդհանուր առմամբ մնում է ընդհանուր հարկերում ամենամեծ ներդրումը:

ԱԱՀ-ն Հայաստանի բիզնեսի հարկման շրջանակի թույլ տեղն է: ԱԱՀ-ն ոչ միայն պատասխանատու է չվճարված (հարկային) եկամուտների մեծ մասի համար, որը խոչընդոտում է եկամտի և շահույթի նկատմամբ կիրառվող ուղղակի հարկերի դեպի անուղղակի և սպառողական հարկեր տեղափոխման քաղաքականությանը, այլ նաև հիմնական հարկատեսակների շարքում ԱԱՀ-ն այն հարկն է, ուր վերջին տարիներին գրանցվել է ամենացածր աճը: 2015թ.-ի ընդհանուր հարկային եկամուտների 39.8%-ից ԱԱՀ-ի եկամուտները նվազել են մինչև 2020թ.-ի ընդհանուրի 34.0%-ը: ԱԱՀ-ի արդյունավետության ցուցանիշները, որոնք չափում են փաստացի և պոտենցիալ հարկային մուտքերի հարաբերակցությունը, Հայաստանում բոլոր սովորական չափումների առումով ցածր են գործընկերների հետ համեմատությամբ : Հետևաբար, Հայաստանը սահմանափակված է անարդյունավետ ԱԱՀ-ի շրջանակով, որը վատ է անդրադառնում օպտիմալ հարկային քաղաքականության վրա այնքանով, որքանով այն չի նպաստում ավելի լավ հարկային մշակույթի կայացմանը:

Հայաստանը հարկաբյուջետային դժվար պայմաններում է: Ներկայում երկիրը ջանքեր է գործադրում պետական դեֆիցիտը կրճատելու ուղղությամբ: Ավելին, կառավարությունը նպատակ ունի նաև միջնաժամկետ կտրվածքով նվազեցնել պետական պարտքի բեռը ՀՆԱ-ի մինչև 50%-ի մակարդակ, որը 2020թ.-ին կազմել էր ՀՆԱ-ի 63,5%-ը: Այսպիսով, հարկաբյուջետային քաղաքականությունը խիստ է և, հավանաբար, կիրառարժի հարկային եկամուտների զգալի նվազեցումից: Այնուամենայնիվ, հարկային քաղաքականությունը կարող է դառնալ ավելի մրցունակ և խթանել տնտեսական աճը՝ վերադասավորելով առկա հարկերի հարաբերական բեռը և բարելավելով ոչ միայն բիզնեսի ընդհանուր հարկումը, այլ նաև միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) արտոնյալ հարկումը: Հարկային քաղաքականության առավելագույնս պարզեցումը և ավելի լավ հաղորդակցումը նույնպես կուժեղացնեն հարկային վարչարարությունը:

Քաղաքականության առաջարկներ

Հարկային քաղաքականության հավասարակշռում՝ նվազեցնելով ընդհանուր հարկային եկամուտներում եկամտի և շահույթի վրա ուղղակի հարկերի հարաբերական կշիռը: Հայաստանը հարկաբյուջետային առումով գտնվում է սահմանափակ պայմաններում, բայց միևնույն ժամանակ երկիրն ունի նաև ծանր հարկային բեռ: Այսպիսով, քաղաքական պատասխանատուները բախվում են կրկնակի մարտահրավերների. այն է՝ հասնել տնտեսական աճն առավելագույնս խթանող հարկային քաղաքականության՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՆԱ-ի աճը և ստեղծել ոչ այնքան ծանր հարկային բեռ՝ միաժամանակ միջնաժամկետ հատվածում չզոհաբերելով հարկային եկամուտները: Ուղղակի հարկերից դեպի անուղղակի հարկեր հարկերի փոփոխությունը/տեղափոխումը կարող է լինել այս նպատակներին հասնելուն համահունչ ռազմավարություն: Արդեն առկան են այս գործընթացների ներդրման նախնական նշաններ:

Ավելին, քաղաքական պատասխանատուները պետք է հետևողականորեն օգտագործեն այն տվյալները ՀՆԱ-ի փոփոխությունների նկատմամբ հարկային եկամուտների միջնաժամկետ արձագանքը չափելու և հակառակը՝ անարդյունավետ հարկերը վերացնել և/կամ բարեփոխելու համար:

Տարեկան հարկային ծախսերի մանրամասն հաշվետվության հրապարակում:

Հայաստանում հարկային ծախսերը գերազանցում են համաշխարհային միջին ցուցանիշը, թե՛ ՀՆԱ-ի տոկոսով, թե՛ ընդհանուր հարկային եկամուտների տոկոսով: Դրանք հիմնականում կենտրոնացած են ԱԱՀ-ում, փոքր չափով նաև շահութահարկում: Չվճարված հարկային եկամուտները կառավարության համար ծախսեր են և կարող են նաև հանգեցնել հարկատուների միջև մրցակցային դաշտում հավասարակշռության խախտման: Ավելին, ԱԱՀ-ի չվճարված եկամուտների դեպքում դրանք Էականորեն խոչընդոտում են հարկային փոփոխությունը, որը Հայաստանը կարող է կիրառել: Հարկային ծախսերը պետք է արտացոլեն հստակ սահմանված քաղաքականության նպատակներ, դրանք պետք է ունենան ժամանակային սահմանափակում և ենթարկվեն կանոնավոր գնահատումների՝ այդպիսով նպաստելով հարկման ծախսերի և օգուտների հաշվարկին:

Վերաներդրված շահույթի հարկերից ազատում:

Հայաստանի շահութահարկը գործում է «հարկվող շահույթը հավասար է համախառն եկամտին՝ հանած նվազեցումները» ստանդարտ բազայով: Այնուամենայնիվ, բացի հարկային օրենսգրքով թույլատրված անհամար նվազեցումներից, որոնք վերածվում են հարկերից խուսափման, պետք է նաև ավելի մեծ ուշադրություն դարձնել շահութահարկը միջազգայորեն մրցակցային հատկանիշներով օժտելու անհրաժեշտության վրա: Դրանք կարող են լինել բուն շահութահարկի բնույթի փոփոխություն, դրամական միջոցների հոսքի մոտեցում, օրինակ՝ ինչպիսին Վրաստանում է, կամ գոյություն ունեցող շրջանակներում այլ տեսակի զարգացում, որի դեպքում վերաներդրված շահույթի նկատմամբ շահութահարկ չի կիրառվի: Սա որոշակիորեն կուժեղացնե անձնական եկամտահարկի շրջանակներում արդեն իսկ գործող նման տարբերակը, որի համաձայն շահաբաժինների վճարումների նկատմամբ կիրառված հարկերը վերադարձվում են հարկ վճարողներին, երբ հասույթը վերաներդրվում է շահաբաժիններ վճարող ձեռնարկություններում:

Հիմնական բոլոր միջոցների ամբողջական ծախսման թույլատրում:

Հիմնական միջոցներում ներդրումները սովորաբար մաշվում են ժամանակի ընթացքում ըստ ակտիվի բնորոշ կյանքի տևողության: Մաշվածությունն ընկերության շահույթի և վնասի վերաբերյալ հաշվետվությունում ներկայացվում է որպես ծախս: Հետևաբար, ամբողջական ծախսման ներդրման արդյունքում ձեռնարկություններին թույլատրվում է գնման պահին ամորտիզացնել ակտիվի արժեքի 100%-ը, այլ ոչ թե դա անել ժամանակի ընթացքում: Քաղաքականության այս միջոցառումն ընդունվել է ՏՀԶԿ անդամ մի շարք երկրներում, ինչպիսիք են Էստոնիան, Լատվիան կամ Չիլին: Այն մեծացնում է կապիտալ ծախսերի ընթացիկ արժեքի վերականգնման տոկոսադրույթը՝ նվազեցնելով տվյալ պահի հարկային պարտավորությունը և մեծացնելով կապիտալ ակտիվների վրա կատարած ներդրումների երկարաժամկետ արդյունքը: Գործնական առումով, ամբողջությամբ ծախսումը նպաստումը է կապիտալի առաջնային ստեղծմանը՝ միաժամանակ խթանելով աճը:

Որպես ԱԱՀ վճարող պարտադիր գրանցվելու համար ավելի ցածր շեմի

հնարավորության դիտարկում: Հայաստանը ԱԱՀ-ի արդյունավետության չափումների առումով ցածր ցուցանիշներ է գրանցել, ինչը նշանակում է, որ երկիրը վերցնում է իր հնարավոր եկամուտների միայն մի մասը: Այնուամենայնիվ, Հայաստանի ԱԱՀ-ի անարդյունավետությունը կապված է ոչ միայն առկա բացառությունների, այլև որպես ԱԱՀ վճարող պարտադիր գրանցման նվազագույն շեմի հետ: Ներկայիս գրանցման նվազագույն շեմը 4,5 անգամ գերազանցում է Արևելյան գործընկերության տարածաշրջանի միջին շեմը և 7,5 անգամ ավելի է, քան Վրաստանինը (տարածաշրջանում ամենացածրն է): Ավելի ցածր շեմը և ավելի մեծ ԱԱՀ եկամուտները՝ որպես ընդհանուր հարկային եկամուտների տոկոս, հավանաբար կտան այնպիսի բարենպաստ արդյունքներ, ինչպիսիք են մուտքային ԱԱՀ-ի նվազեցման խթանների ավելացումը, ՓՄՁ-ներում մասնագիտական չափանիշների խթանումը և հարկերի փոփոխման հնարավորությունը, ինչպես արդեն քննարկվել է վերևում:

ԱԱՀ-ի հետ կապված վարչարարության հիմնական ասպեկտների բարեփոխում:

Ոչ մի այլ հարկատեսակ ավելի լավ չի կարող նկարագրել Հայաստանի Հարկային օրենսգրքին ներհատուկ բարդությունը, քան ԱԱՀ-ն, և զարմանալի չէ, որ ԱԱՀ-ից ստացված հարկային եկամուտները դադարել են լինել տնտեսության ընդհանուր վիճակի կանխատեսելի ցուցիչն այս երկուսի միջև հստակ հարաբերությունների բացակայության պատճառով: Այսպիսով, հարկային ոլորտի պատասխանատուները, պետք է երկու հիմնական փոփոխություն կատարեն ԱԱՀ-ում: Նախ, ԱԱՀ-ի հակադարձ գանձման կանոնները, որոնց համաձայն հարկային պարտավորությունները մարվում են ապրանքների կամ ծառայությունների գնորդների (ոչ վաճառողների) կողմից, պետք է սահմանվեն ռեզիդենտ հարկ վճարողների միջև այն ոլորտներում, ուր հարկերից խուսափելու միտումներ կան: Եվ երկրորդը, ԱԱՀ-ի վերադարձի դիմումները և վերադարձը պետք է դառնան ամբողջովին ավտոմատ և իրականացվեն թվային միջոցներով: Ավտոմատացման այս գործընթացը, ամենայն հավանականությամբ, Կառավարությունից կպահանջի ենթակառուցվածքային ներդրումներ՝ թվային հարթակներ օգտագործող հարցվողների կողմից մատնանշված սերվերային խափանումներից խուսափելու համար:

Շրջանառության հարկի ձևավորման անհամապատասխանությունների շտկում:

Շրջանառության հարկի ձևավորումը սահմանված է այնպես, որ շրջանառության հարկի վերին շեմը համընկնի որպես ԱԱՀ վճարող գրանցվելու համար պարտադիր (նվազագույն) շեմի հետ՝ այդպիսով թույլ տալով, որ շրջանառության հարկը փոխարինի և՛ շահութահարկին, և՛ ԱԱՀ-ին: Այնուամենայնիվ, ի հայտ են գալիս երկու անհամապատասխանություններ, որոնցից մեկը կապված է ԱԱՀ-ի հետ, և իսկ մյուսը, որն արդեն գործում է, պետք է վերջնականապես շտկվի: Առաջին դեպքում որպես ԱԱՀ վճարող գրանցվելու համար անհրաժեշտ շեմի ցանկացած փոփոխություն (ինչպես քննարկվեց վերևում) պետք է ուղեկցվի շրջանառության հարկի շեմի հավասարաչափ ճշգրտմամբ: Եվ երկրորդը, ձեռնարկատերերը, որոնց դեպքում կիրառվում է շրջանառության հարկի շեմ և որոնք դեռևս չեն կարողանում օգտագործել այս հարկատեսակը թե՛ շահութահարկին, թե՛ ԱԱՀ-ին փոխարինելու համար (օրինակ՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները), չպետք է , ինչպես ներկայումս, սահմանափակվեն այս արտոնյալ ռեժիմից լիարժեք օգտվելու հարցում:

Շրջանառության հարկի բազմադրույթային կառուցվածքը փոխարինել միադրույթ

կառուցվածքով: ՄՓՄՁ-ների համար արտոնյալ, պայմանական հաշվարկային ռեժիմ ունենալու ողջ նպատակը հարկային վարչարարության պարզեցումն է՝ նվազեցնելով բիզնեսի ֆորմալացման լրացուցիչ ծախսերը: Հետևաբար, տարբեր դրույթաչափերի ընդունումը՝ ըստ ձեռնարկատիրական գործունեության տեսակի, հակասում է ռեժիմի նպատակին: Բոլոր համապատասխան ոլորտներում շրջանառության հարկը մեկ դրույթաչափով հաշվարկելը կարող է իրականացվել երկու ճանապարհով՝ կամ համապատասխան ձեռնարկությունների համար հարկային արդյունավետ դրույթաչափը շեմային մակարդակում ավելի ծանր դարձնելով, քան կորպորատիվ եկամտահարկի ստանդարտ դրույթաչափը (երկուսի միջև արբիտրաժային հնարավորությունները նվազեցնելու համար), կամ բոլոր տնտեսական հատվածներում հարկումից հետո շահույթի չափերը հավասարեցնելով (տարբեր ոլորտներում հարկային անհավասարությունը նվազագույնի հասցնելու համար): Կատարյալ օպտիմալություն ապահովել հնարավոր չէ, սակայն բոլոր տեսակի փոքր բիզնեսների համար կիրառելի մեկ միասնական դրույթաչափի պարզության առավելությունը գայթակղիչ է:

Հետազոտությունն ու զարգացումը (Հ2) խրախուսող հարկային արտոնություններին համար ծախսերի վրա հիմնված մոտեցման մշակում:

Հայաստանը երկար ժամանակ խրախուսել է տեխնոլոգիական ոլորտը՝ հարկային արտոնություններ տրամադրելով տեղեկատվական և տեխնոլոգիական (SS) ոլորտում գործող ձեռնարկություններին, և վերջերս նաև դարձել է աշխարհի այն եզակի երկրներից մեկը, որտեղ ծրագրային ապահովումը կարող է արտոնագրվել: Այնուամենայնիվ, գոյություն ունեցող խթանները տուժում են ձևավորման հետ կապված պարադոքսից. սահմանափակելով Կառավարության կողմից երաշխավորվող համապատասխան ձեռնարկություններ ցանկը, ներառելով այն ձեռնարկություններն, որոնց աշխատողների թիվը 30-ից պակաս է՝ արտոնությունների տրամադրման հարցում անհավասար պայմաններ են առաջանում, միաժամանակ նաև զսպում բիզնեսի աճը: SS ստարտափ ձեռնարկությունների համար առկա արտոնությունների փոխարինումը ծախսերի վրա հիմնված Հ2 հարկային խթաններով, որոնք հասանելի կլինեն ոչ միայն SS ստարտափներին, այլ ավելի շուտ Հայաստանի բոլոր փոքր և մեծ, տեխնոլոգիական կամ ոչ տեխնոլոգիական բիզնեսներին, կլինի ավելի արդարացի և, հավանաբար, ավելի արդյունավետ նաև փոխակերպվող ներդրումների և մտավոր ակտիվների ստեղծման գործում:

Խթանել վստահությունը՝ հզորանցելով հարկատուի ունակությունները: Երկրում արձանագրված հարկային վատ մշակույթի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է անհապաղ հստակեցնել և պարզեցնել Հայաստանի հարկային օրենսգիրքը: Վերջերս իրականացված հարցումները ցույց են տալիս, որ Կառավարության և հարկատուների միջև վստահելի փոխհարաբերությունների ստեղծման համար առաջին կարևոր քայլը կլինի հարկային օրենքների հստակեցումը՝ բացառելով ցանկացած իրավական երկիմաստություն: Քաղաքականության անորոշությունը սովորաբար տնտեսական աճի համար բարենպաստ պայմաններ չի ստեղծում Ավելի վստահելի բիզնես միջավայր ստեղծելու համար երկրորդ անհրաժեշտ քայլը կլինի հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունների կասեցումը: Կառավարությունը պետք է նաև լրացուցիչ ջանքեր գործադրի այն հարկատուների ուղղությամբ, ովքեր տեղյակ չեն հարկային

մարմինների կամ այլ կազմակերպությունների կողմից մատուցվող վերապատրաստման ծառայությունների մասին: Հնարավոր է, որ այս ամենը կհանգեցնի ավելի լավ հարկային մշակույթի ձևավորմանը:

Կետային ամփոփում

- Հարկային քաղաքականության հավասարակշռում նվազեցնելով ընդհանուր հարկային եկամուտներում եկամտի և շահույթի վրա ուղղակի հարկերի հարաբերական կշիռը,
- Տարեկան հարկային ծախսերի մանրամասն հաշվետվության հրապարակում,
- Վերաներդրված շահույթի հարկերից ազատում,
- Հիմնական բոլոր միջոցների ամբողջական ծախսման թույլատրում,
- Որպես ԱԱՀ վճարող պարտադիր գրանցվելու համար ավելի ցածր շեմի հնարավորության դիտարկում,
- ԱԱՀ-ի հետ կապված վարչարարության հիմնական ասպեկտների բարեփոխում,
- Շրջանառության հարկի ձևավորման անհամապատասխանությունների շտկում,
- Շրջանառության հարկի բազմադրույքային կառուցվածքը փոխարինել միադրույք կառուցվածքով,
- Հետազոտությունն ու զարգացումը (ՀԶ) խրախուսող հարկային արտոնություններին համար ծախսերի վրա հիմնված մոտեցման մշակում:
- Խթանել վստահությունը՝ հզորացնելով հարկատուի ունակությունները: